

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են մինչև լիզուով

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## “ՄՇԱԿ” ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878 Թ. 4

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՒ ԼՐԱԿՆ ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՆԵՐԻ ՆՈՒՆԵՐԻՆ ՏԵՄԵՆՆԵՐԻ:

Լրագրի դիմումը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՄՇԱԿԻՆ ԶԵՆԻՏԻՆԻՆԵՐԻ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻ մէջ:

ԼՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը: Օտար քաղաքներից պետք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղտնի օգուտ քաղենք:—Ներքին տե-  
սութիւնը, նամակ վերին-Ազուխից, ներքին  
լուրերը—Արտաքին տեսութիւնը: Անգլիա-  
նական ճարտարապետից: Նամակ Գերմանիայից:  
Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրերը—«Մը-  
շակի» հեռագիրները, — Յայտարարութիւնները, —  
Տեղեկացոյց:

### ԴԱՄԻՑ ՕԳՈՒՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վերջին երկու տարվայ ըն-  
թացքում հայերը իրանց մասին  
լսել տուեցին ամբողջ աշխարհին:  
Ծանփեցաւ մինչև անգամ հայոց  
խնդիրը....

Երկու տարի վայրկեան է մի  
ազգի կեանքի համար, մանաւանդ  
մի այնպիսի հնադարեան ազգու-  
թեան համար, ինչպէս հայերն են:

Ազգերը պատրաստվում են քա-  
ղաքական կեանքի համար տաս  
տարիների, հարկւր տարիների ըն-  
թացքում, ձգտում են, ջանքեր են  
անում այս կամ այն հետևանքին  
հասնելու, շատ անգամ արած  
ջանքերը անաջող են լինում,—բայց  
կեանք և բնաւորութիւն ունեցող  
ազգերը քաղաքական անաջողու-  
թենից չը պետք է վճատեն....

Ամեն մի անաջողութեան վրա  
ապագայ ունեցող ազգերը պետք  
է նայեն ինչպէս մի դասի վրա,  
որի դառն փորձից պետք է օգուտ  
քաղեն անցեալում իրանց բռնած  
սխալ ընթացքը ուղղելու համար:

Վերջին երկու տարվայ մէջ  
հայերը, այո՛, լաւ աշխատեցին:  
Այդ պէտք է խոստովանել:

Բայց այդ երկու տարուց ա-

ռաջ ի՞նչ արին նրանք այդ ձգնա-  
թամին պատրաստվելու համար....

Ոչինչ, կամ գրեթէ ոչինչ:

Մօտ քսան տարի է որ թիւր-  
քիայի հայերը վայելում են սահ-  
մանադրութիւն: Երդեք օգուտ  
քաղեցին նրանք այդ սահմա-  
նադրութենից:

Նրանք կարող էին տեղափո-  
խել իրանց ազգային ժողովը  
Թիւրքիայի մայրաքաղաքից Հա-  
յաստանի հողե վրա: Նրանք  
այդ չարեցին:

Նրանք պետք է աշխատէին  
կազմել իրանց սեփական միջցիտ  
քուրդերի և չերկեսների դէմ ի-  
րանց պատիւը և կայքերը պաշտ-  
պանելու համար: Նրանք այդ չա-  
րեցին:

Նրանց հոգևորականութիւնը  
պետք է աշխատէր գրաւել դէպի  
հայոց դպրոցները հայերին բարե-  
կամ թափառական ցեղերի, եղեղ  
քուրդերի, ասորեցիների և այլ  
ցեղերի նոր սերունդը: Նրանք  
այդ չարեցին, պիղծ և անարժան  
համարելով այլազգիների երեխա-  
ներին հայոց հոգևոր դպրոցների  
մէջ ընդունված լինելու համար:

Տարիներով մենք ոչինչ չենք  
արել և պահանջում ենք որ եր-  
կու տարվայ մէջ մի խումբ երի-  
տասարդների և երկու երեք լու-  
սաւորված հոգևորականների ջան-  
քերով, որոնց գործունէութեանը  
շատերը մինչև անգամ աշխատում  
էին վնասել, ազգը հասնէր նոյն  
աջող հետևանքներին, որոնց հա-

սան սլավոնական ցեղերը հարկւր  
տարվայ ջանքերով, աշխատանքով  
և անթիւ զոհաբերութիւններով:

Այն հետևանքներն էլ որոնց  
մենք հասանք երկու տարվայ ըն-  
թացքում, պետք է հրաշալի հա-  
մարվեն....

Գոհ լինենք այն հետևանքնե-  
րով, որոնց հասանք, աշխատենք  
օգուտ քաղել ձեռք բերված իրա-  
ւունքներից, աշխատենք այդ իրա-  
ւունքները իրագործելու ժամանակ,  
որքան հնարաւոր է լայնացնել  
ընդարձակել նրանց, բայց մանա-  
ւանդ աշխատենք օգուտ քաղել  
մեզ տուած դառն դասից և այ-  
սուհեակ գործերը բոլորովին այլ  
կերպով քան թէ մինչև այժմ  
գործում էինք:

Հայի նպատակը պետք է այ-  
սուհեակ լինի՝ զարգացնել իր բո-  
լոր ազգային ոյժերը իր մայրենի  
հողե վրա, մոցնել իր ազգի մէջ  
եւրոպական լուսաւորութիւն, աշ-  
խատել բարեղեւ իր ժողովրդի  
տնտեսական դրութիւնը և ամեն  
միջոցներով դէպի իրան գրաւել  
իրան շրջապատող վայրերի բարե-  
կամական ցեղերը, մոցնել նրանց  
մէջ քաղաքակրթութիւնը, իսկ  
թշնամի թափառական ցեղերի  
դէմ դէնք ձեռին պաշտպանվել:

Ահա՛ այն նախագիծը, որին  
Թիւրքիայի հայերը վաղուց ար-  
դէն պետք է հետևեն:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ

2 յուլիսի

Մի բան որ ինձ բոլորովին զարմացնում է  
դա մեր ազուկեցիների անտարբերութիւնը և  
սառնասրտութիւնը դէպի թաթրօնական գործը:

Թէ որ աստիճան նախապաշարմունքը ազու-  
կեցիների սրտում աճել է, դժուար է մի առ մի  
նկարագրել: Ընթերցող երևի դեռ ևս չէ մոռա-  
ցել այս տարվայ զարման անդադար թափ-  
վող անձրևները և սարսափելի հեղեղները: Մեր  
գիւղն էլ միւս գիւղերի և քաղաքների նման մի  
քանի անգամ ենթարկվեցաւ այդ հեղեղին: Բայց  
և դրա պատճառը մեր պառակտման հարցը—  
Աստուծոյ փրկութիւնն է, կը պատասխանէ նա  
քեզ իսկոյն,— որովհետեւ մեր մարդիկ ճանա-  
պարհից դուրս են եկել՝ շատ մեղքեր են գոր-  
ծում, գերեզմանի քարերը ծախում, այդ պատ-  
ճառով Աստուծոյ բարկացել է մեզ վրա և իր  
հրաշքն է ցոյց տալիս, որ մենք դարձ գանգ և  
միւս անգամ այսպիսի մեղքեր չանենք: Բայց  
սրանով չը վերջացաւ գործը: շատ անգամ պա-

տահել է ինձ լսել կանանց բերնից՝ Թէ այս ինչ,  
կամ այն ինչ պառակտ երազ է տեսել, որ իբր  
Թէ այս ինչ ամսին ջրհեղեղ պէտք է լինի, կամ  
Թէ չէ տեսել են որ երկինքը երկու մաս բա-  
ժանվեցաւ, այնտեղից ցած իջան երկու ձերուհի  
սրբեր, նրանցից մէկը բարկացած, կամեցում էր  
Ազուկեցի ջրհեղեղով վերջացնել, իսկ միւսը խա-  
չակրեցելով, կամեցում էր փրկել նրան, բայց լազ-  
թութիւնը առաջինի կողմն անցաւ, և վերապէս  
երրորդներն էլ տեսել են որ Աստուծոյ ձեռքն է  
այս բոլոր անբաղդութիւնների պատճառը և ան-  
պատճառ պէտք է որ ժողովուրդը մտադրով նրան  
աղաղակելու գնայ:

Բաւական է այս մասին խօսել, որպէս զի նա-  
տակիցս չը չեղվեմ, վերադառնանք կրկին մեր  
թաթրօնին, Ազուկեցի թաթրօնը եռանդով միւս-  
վեց, համակրելի և սիրելի եղաւ մեր հասարա-  
կութեանը, իսկ այժմ նա վերջացրել է իր գո-  
յութիւնը: Այո, առաջ (1867 թ.ից սկսած) առ-  
բին մի քանի անգամ էր լինում ներկայացում,  
այժմ լինում է միայն մի անգամ և այն եւս հա-  
զար ու մէկ դժուարութիւններով: Եւ, որպէս  
թաթրօնի սիրող և նրան համակրող միայն ներ-  
կայ եմ գտնվել ներկայացումներին, պէտք է  
խոստովանված որ այստեղի սիրողները շատ ա-  
ջող կերպով են միշտ կատարել իրանց դերերը:  
Բոլոր ներկայացումների ժամանակ մի պարզ-  
սուքիւն միշտ պէջի է ընկել—այդ դերասանու-  
հիւների բացակայութիւնն է: Մեր հասարակու-  
թիւնը բաւական ժամանակ է բաղդ չէ ունեցել  
դեմքի բեմի վրա եւ օրիորդներից մէկին, բայց  
առաջ օրիորդները բեմ էին դուրս գալիս: Ու-  
րեմն Ազուկեցի քանի գնում է, ընկնում է, քա-  
լերը յետ է մղում, որովհետեւ ինչպէս ասացի,  
1867 թ.ից սկսած համարեմ թէ մինչև 1872  
թ.իւր մեր օրիորդները բեմ էին դուրս գալիս,  
իսկ այժմ չը կան, անհետացել են, ենթարկվել են  
նախապաշարմունքին:

Առաջ ազուկեցիները մեծ ուրախութեամբ թոյլ  
էին տալիս իրանց աղջկանց բեմ դուրս գալ,  
մինչև անգամ վաճառանոցում հայերը պարծե-  
նում էին իրանց աղջկանց լաւ խաղով, իսկ  
այժմ ոչ թէ միայն չեն թոյլ տալիս օրիորդնե-  
րին մասնակցել թաթրօնական ներկայացումնե-  
րին, այլ և տղերանց արգելում են օրիորդների  
դերեր կատարել: Մի քանի ժամանակ առաջ  
այստեղի թաթրօնասերները դիմեցին մի պա-  
րոնի, խնդրելով որ նա թոյլ տայ իր օրիորդին  
կատարել աղջկայ դերը: Պարոնը թոյլ չը տուեց  
ասելով, որ իր օրիորդը մի ժամանակ պէտք է  
քահանայ ձեռնադրվի, իսկ քահանայացուն նա-  
վայել է բեմ դուրս գալ: Միթէ պարոնը մոռա-  
ցել է, որ սուրբ Գրիգորափոք եկեղեցու այժմեան  
երիտասարդ քահանան ոչ թէ միայն մասնակ-  
ցում էր թաթրօնական ներկայացումներին, այլ  
և հարսանքներում և խնջոյքներում նազարա  
էր թափում և ամեն տեսակ յիմարութիւն էր  
անում:

Ազուկեցիք ոչ թէ միայն խորում են թաթրօ-  
նից, այլ մինչև անգամ անունն էլ չեն ուղում  
լսել: Ահա պատմեմ ձեզ այն անցքը, որ իմ  
բարեկամ թաթրօնասերը պատմեց ինձ անցեալ  
1877 թ.ին: «Նրեք քաղաքում դիմեցինք մի  
պարոնի տոմսակ բաժանելու, մենք բոլորովին  
սարսափած ստացանք այս պատասխանը: Ըմենք  
ձիւ աշխատած փողեր չունենք, որ գանք թաթ-  
րօն, կապիկների (դերասանների) պարին նայենք,  
գնացե՛ք, գնացե՛ք բան չունենք, թաթրօնը որդի,  
դուք թաթրօն խօ չէք անում, փողի թափակ  
(թակարթ) էք չինել և մեր փողերը ժողովում  
էք ու ձեր վրեք դնում....» (բայց ես ինչքան  
միջում եմ այստեղի ներկայացումները միշտ եղել  
են բարեգործական նպատակով, իսկ վերջինն էլ,  
կարծեմ, յօգուտ Վարդապետան ընկերութեան  
համար է: «Կը պատրաստես ներկայացումը, կը  
ծաղի յանկարծ խոռվութիւն», ասում էր կրկին  
իմ բարեկամը: Մէկը կը նեղանայ, կը փքվի որ  
նրա համար կոշմվեցաւ տոմսակ չէնք ուղարկել,  
միւսը որ նրա հետ խորհուրդ չէնք արել, եր-  
րորդը որ թաթրօնի պիեսան չենք տուել կար-  
գալու և հազար ու մէկ այսպիսի լրբութիւններ,

կարծես խնամատարներ լինեն նստած մեր գլխին...»

Արեւմտեան խոսքը, դառնում եմ դէպի ձեզ սիրելի ծնողներ, պահպանե՛ք ամբողջութեամբ մի ամենակարեւոր հիմնարկութիւն, ինչպիսին է ազգային թատրոնը, բաւական է ինչքան նախապաշարմունքին զո՞հ դարձաք, պատրաստեցե՛ք վերջապէս մեզ ձեր օրերը դնելին այդ ազգային դործի համար, թողէ՛ք գոնէ մեր միտքը զարդանայ:

Մի օրերը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

ՊԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ յուլիսի 5-ին այնտեղ սաստիկ կարկուտ է եկել և բաւական ձիւսներ է տուել բնակիչներին: Խաղողի այգիները շատ են ձիւսված: Կարկուտը տեղ է երեք օրով:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «յուլիսի 2-ին հոգեւոր դպրոցի հոգաբարձուները ընտրութիւն են Լոգաբարձուները ընտրվեցան: Ընտրողների թիւը 37 էր: Դրանք բոլոր Արիստակէս վարդապետի կողմնակիցներ էին քահանայք, տիրացուներ և այլն: Հայր Անդրեասը այս անգամ ընտրութիւնները կանոնաւոր համարեց իսկ անցեալ ամսվայ ընտրութիւնը. չը նայելով որ հասարակութեանց 180 անձինք էին հաւաքվել: Նա անկանոն համարեց, որովհետև քուէարկութեանց Արիստակէս վարդապետը նկատեց, որ իր կուսակցութեան պատկանող անձինք չեն ընտրվում:»

ԱՌԱՒԱՍԱՒԱՐՑ մեզ գրում են. «Առաջին հարկաւորութեան միջոցների գները հետեւեալներն են. ալիւրի պոնդը 1 ր. 10 Կ. — 1 ր. 40 Կ., մսի ֆունտը տաւարինը 10 Կոպ., ոչխարինը 9 Կ., հալած իւղը 40 Կ., 100 ձուռ 1 ր. 20 Կ., նաւթը 20 Կ.:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնից յուլիսի 1-ին գրում են հետեւեալը «Independance Belge» լրագրին: «Այստեղ ընդհանրապէս կարծում են որ լըդ Բիկոնսֆիլդը կը ստանայ կոնգրեսից ինչ որ ցանկանում է: Անգլիա վերադառնալուց յետոյ, լըդնը կը սայ պարլամենտը: Իր կուսակցութիւնը նոր ընտրութիւններով աւելի բազմաթիւ կը լինի պարլամենտում: քան թէ այժմ և երբ դուք լինի, փառքով և պատուով ծածկված, կը հեռանայ քաղաքական ասպարիզից: Խորհրդի Բիկոնսֆիլդը այս րօպէիս կանգնած է դէպի ամենամեծ ժողովրդական նութիւն բարձրանալու. աստիճանի վրա, որին ոչ մէկ պետական մարդ չէ հասել: Անգլիայում Իր հակառակորդների մէջ անգամ իր վրա հիացողներ ունի: Արդէն սկսել են նրա անունով անուանել հիւրանոցներ և հասարակական տիգեր: Սովորութիւն է այդ Անգլիայում, ինչպէս որ Պալմեստոնի, Բոքսթոն Պիլն և այլ երևելի քաղաքագետների անուններով կոչվում են մի քանի տեղեր:»

«Այսօր Անգլիայի առաջին մինիստր դաւած պատգամաւորի 1847 թւին խօսած ճառից մի քաղաք հրատարակվեցաւ այս օրեր: Այդ ճառը անդադար ընդմիջել են և հաճութեան նշաններով, ծիծաղներով, սուլելով և ամեն տեսակ բաներով որով ծաղրում են մէկ տհաճելի ատենաբանի: Սթէ մէկը երեսուն տարուց առաջ ասելը տօրին էրին, ինչպէս և վեգէրին, թէ այս աստիճան ծաղրելի եղած պատգամաւորը մի օր կը կաւալարի Անգլիային և նրան մինչև պատեւրազ մտնողները եղբւր տանելուց յետոյ, կը կարողանայ յետ դարձնել դէպի խաղաղութեան քաղաքութիւնները, այդ աստղը ամենին

էլ ծաղր կը շարժէր: Այն ժամանակ որքան որ յարգում էին նրա տաղանդը իբրև հեղինակ «Coningsby»-ի, նոյնքան էլ արհամարհում էին նրան իբրև պատգամաւոր: Դիւրապէս: Զօն Բրայտ անուանի ատենաբանը խոյտառակում է նրան պարլամենտի մէջ ասելով որ շատ ցանկալի էր թէ որչափ զրակաւորութեանց իմանում էր նոյնչափ էլ իմանար քաղաքագիտութեանց, բայց քաղաքագետն ոչինչ չէ հասկանում:

«Ընդհանրապէս չեն երևակայում թէ Դիւրապէս այն ժամանակ ինչ էր: Այսօրվայ Բիկոնսֆիլդը մեղացեալ է այն արգելքները որոնց դէմ ինքն սպիւլված էր կրոււն և այն դժուարութիւնները որոնք երբեմն ինքն էր յարուցանում իր դէմ: Քիչ մարդ կայ որ նրա չափ իր խօսքերին հակառակորդներ ունեցած լինի: Օրինակի համար մենք բերում ենք այստեղ իր պարլամենտական կեանքից մի դէպք որի հետ ընչէր ծանօթ են: Այդ պատահել է 1847 թւին երբ պարլամենտում յարձակվելով սիր Բոքսթոն Պիլն վրա, հարցրել է ամբարտաւանութեամբ՝ «Բայց ո՞վ է այդ սիր Բոքսթոն Պիլ և ո՞րին ներկայացնում է նա այստեղ:» Սիր Բոքսթոն Պիլ օտր է կանգնել իր խօսած ճառի որ մի տկանջաւոր վկայ պատմել է ինձ, վերջապէս միայն գրում եմ այստեղ, որով կարծում էր նա խայտառակել իր յանդուգն հակառակորդին: «Երբ վերադարձի պատգամաւորը, ասել է Բոքսթոն Պիլ, ինձ հարցնում է թէ ո՞րին ներկայացնում եմ ես և թէ ո՞ր սերունդից եմ առաջացել: Դժուար չէ գուշակել թէ ինքն ո՞վ է և ո՞ր սերունդից է առաջացել, որովհետև յայտնապէս նա առաջացած է այն աւազակների սերունդից որոնք Քրիստոսի երկու կողքերից խաչվեցան:» Այդ ժամանակ մի հեգնական ծիծաղ է լսվել Դիւրապէսին էլ ծիծաղում էր: Այդ ծիծաղը զինաթափ է արել Բոքսթոն Պիլին որ զգալով իր արած սխալը, նստել է իր տեղը: Դիւրապէսին որ իր գրեթէ շատ փող էր շահում, աւելի շատ վատնում էր: Այս մասին նմանում էր Լամարտինին: Մի բարեկամ ինձ ապահովացրուց որ ինքն տեսել է վճռադիւրներ որոնք հաստատում էին Դիւրապէսին հաղաւոր ստերլինգ ոսկի պարտք ունենալը: Բայց նրա փոյթը չէր. նա ծիծաղում էր այդ պարտքի դատավճիռների վրա ինչպէս ծիծաղել էր այն թշնամանքի վրա որով Բոքսթոն Պիլ յիշեցրել էր նրան իր հրէական ծագումը: Նա զգուշանում էր միայն Անգլիայում պարլամենտական նստերից առաջ և յետոյ: Այս կերպով փախչում էր պարտատէրերի ձեռքից և աղափում էր պարտքի համար բանտարկվելուց:

«Անգլիայում պետական մարդ դառնալու համար հարկաւոր է կամ ազնուական սերունդից լինել կամ հարուստ լինել: Երբ մարդ տաղանդ ունի, բայց աղքատ է, աննշան է մնում: Դիւրապէսին իր աննշան դրութեանց չէր դուրս գալ, կամ գոնէ մի անուանի գրագետ կը լինէր միայն, եթէ մի հարուստ կը նոջ հետ ամուսնանալով նշանաւոր չէր եղել: Այդ կնոջ նա մեծ երախտագիտութիւն ունեցաւ, ինչպէս որ դեռ մի քանի տարի առաջ, նրա մահի օրը, հրապարակաւ խոստովանած է:»

ՆԱՄԱԿ ՖԻՐԱՆՍԻՍԻՑԻՑ

Փարիզ, 8 յուլիսի

Նկարագրել մի նամակում այն բոլորը որ կատարվում է փարիզում, — անկարելի է: Աշխարհի այդ մայրաքաղաքում ամեն բան այնքան լայն, մեծ և ընդարձակ է, որ ես հրաժարվում եմ ամեն իմ տեսած բանի վրա խօսել: Հայ ընթերցողին այս րօպէիս ամենից աւելի,

գիտեմ, հետաքրքրում է այն, թէ ինչպէս վերաբերվում է, կամ վերաբերվում էր Բերլինի կոնգրէսից առաջ ֆրանսիական հասարակական կարծիքը դէպի հայոց խնդիրը: Եւրօպային երբ խօսում է մի այնպիսի հեռաւոր երկրի վրա ինչպէս Հայաստանն է, մի ասիական փոքրիկ ազգութեան վրա, ինչպէս հայերն են, — կամ իր աննշանական շահերից դրդված է խօսում, կամ եթէ նրա մէջ զարթնում է ճշմարիտ մարդասիրական զգացմունքը, նա այն հեռաւոր ազգութեանը կարծես մի առանձին ողորմութիւն է անում մէկ երկու երեք յօդուած նուիրելով նրան իր լրագրիւնների էջերի մէջ: Աւելի ինչ կարող ենք պահանջել:

Կովկասում ապրելով ես ձեզ հետ վրդովում էի որ Եւրօպան այնքան անսիրտ է, որ չէ մըտածում այնպիսի ընդունակ, համեմարեղ ազգի վրա, ինչպէս հայերն են, որոնք ճշմարիտ կարող են լինել լուսաւորութեան կարապետներ Ասիայում: Այժմ պտտելով այդ ահագին քաղաքում, այդ սարսափելի աշխարհում, որին փառից են ասում, դեռ դարմանում եմ որ ֆրանսիացիները այդքան անթիւ սեփական հոգեւոր ունեւորվ, մտածում են, գրում են հայերի վրա չէ Եւրօպայում, կրկնում եմ ամեն բան այնքան րնդարձակ է: — Ներքին և արտաքին հարցեր, կոնգրէս և աշխարհահանդէս, գործարաններ և գիտութեան տաճարներ, կուսակցութիւնների պատերազմը և սօցիալական շարժումներ մշակ գասի, — որ նրանց համար գլխաւորը կազմում է, նրանց ուղեղի վրա ազդում է մեծ ու թիւնը, չափը, թիւը: Ինչքան էլ Եւրօպան համար իրէր, ոգևորված լինէր հայոց խնդրով, չէ կարելի պահանջել որ մի փարիզ, կամ մի Լօնդոն կատարելապէս զբաղվէր հայոց ազգութեան հարցով, երբ ֆրանսիացին կամ անգլիացին, մտածում է թէ հայերի ամբողջ թիւը թիւրքիայում 3 միլիոն է, այն ինչ մի փարիզի, կամ մի Լօնդոնի բնակիչների թիւը անցնում է 3 միլիոն բնակիչներից...:

Այդ մեզ համար լաւ դաս է ապագայում. մենք ինքներս աշխատենք մեզ համար, առանց մեծ յոյս դնելու օտարների մարդասիրական զգացմունքների վրա: Ֆրանսիական առաջը ասում է՝ «Իւրաքանչիւրը իր համար, Աստուածը ամենքի համար:»

Որպէս թիֆլիսի բնակիչ, ես թողնում եմ ընդհանուր և անցնում եմ մասնաւորին: Ես կամ մնում եմ ձեր և մեր քաղաքի քաղաքային վարչութեան ուղադրութիւնը դարձնել մի շատ կարեւոր խնդրի վրա:

Մինչև որ եւրօպային առաջ է գնում, մենք դեռ նոր ենք մտածում իրադրոյթ այն, որ արգէն հնացել է Եւրօպայում: Պտտելով փարիզի լայն և երկար փողոցներում, ես ակամայա ուղադրութիւն դարձրի այն երևոյթի վրա որ գաղի լուսաւորութիւնը սկսում է քաղաքի լուսաւորութեան մէջ երկրորդական տեղը բռնել և նրան փոխարինում է էլ է կտրական լուսաւորութիւնը, որ աւելի պայծառ է և անհամեմատ քիչ է նստում, քան թէ գաղի լուսաւորութիւնը: Գաղի մի քանի լապտերներ համեմատելով էլ է կտրական լոյսով վառված մէկ երկու լապտերի հետ օսաստիկ ողորմելի են երևում, փայլում են աղոտ, մութ կերպով: Դուրի լոյսի պէս:

Հիւսիսային Ֆրանսիայի Լիլ քաղաքը նորեւում մեծ ծախսեր է արել կատարելագործելու համար իր փողոցների լուսաւորութիւնը և պատուիրել է գաղի խողովակներ և ամեն բան ինչ որ գաղի համար հարկաւոր է: Բայց այժմ Լիլ քաղաքի վարչութիւնը ստիպված է անգործադրել թողնել իր արած անգին ծախսերը, համազօրելով որ աւելի ձեռնադու կը լինի լուսաւորել քաղաքը էլ է կտրական լուսով:

Թող մտածի այդ բանի վրա և մեր թիֆլիսեան քաղաքային վարչութիւնը: Ճշմարիտ է, մենք ուրիշ, աւելի կարեւոր պահանջներ ունենք, մենք դեռ չունենք ամենակարեւորը՝ ջրանցք: — Բայց ինչի գաղի վրա ծախսեր անել, երբ այդ չլուտով կը լինի գուր ծախս, և էլ է կտրական լուսաւորութիւնը գաղից լաւ է և է քիչ:

Բայց ի հարկէ մեր հասարակութիւնը խօսքով համոզել անկարելի է: Ցանկալի է որ մեր քաղաքի բնակիչները մէջ գտնվի գոնէ մէկը որ փորձով ցոյց տայ իր հայրենակիցներին թէ որքան ամեն կողմից առաւելութիւն ունի էլ է կտրական լոյսը ուրիշ տեսակ լուսաւորութեան միջոցներին համեմատ:

\*\*\*

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻՍԻՑԻՑ

Բերլին, 10 յուլիսի

Այստեղի «Könlgl. Privileg. Berlinische Zeitg.» լրագիրը իր յուլիսի 6-ի համարում տպեց մի երկար յօդուած հայոց խնդրի վրա «Zur Armenischen Frage» վերնագրով: Այդ յօդուածի մէջ լրագիրը ցոյց է տալիս թիւրքիայի պետական ամբողջ անընդունակութիւնը, արմիրխտաբացիայի կաշառակերութիւնը և սաստիկ գոլում է հայոց ազգի ընդունակութիւնները, անուանելով հայերին քրիստոնէական քաղաքակրթութեան կարապետներ Ասիայում: Լրագիրը ասում է որ հայերը Ասիայի չլէյցարացիներ են և վերջացնում է իր խօսքը ասելով որ հայերին ինքնավարութիւն տալը բաղդ կը լինէր ոչ թէ միայն նոյն իսկ հայերի համար, բայց և թիւրքիայի և ամբողջ Եւրօպայի համար և մասնաւոր արեւեան խնդրի մէջ շահ ունեցող պետութիւնների համար: Զօդուածի վերջում գերմանական թերթը տպում է թիւրքերի և ջուրդերի ձեռքով հայերից կրած հարստահարութիւնների մանրամասն տեղեկութիւններ:

Վերջապէս կոնգրէսի այսօրվայ (յուլիսի 10-ի) նիստում հայոց խնդրին էլ իր վճռին հասաւ: Կ. Պօլսի հայոց ազգային ժողովից այստեղ ուղարկված պատգամաւորները խաբվեցան իրանց յոյսերի մէջ: Հայաստանը հայ դեկլարացիներից ներկայացրած յիշատակագրին համեմատ ինքնավարութիւն ստանալու չէ, այլ նրան կոնգրէսը խոստանում է Սան-Սթեֆանօի դաշինքի ժառանգորդութեան համեմատ լեֆֆօրմներ մտցնել, որոնք պիտի համապատասխան լինեն երկրի պահանջներին, իսկ թիւրք կառավարութիւնը յանձն է առնում պարբերապէս (որովմած ժամանակամիջոցների մէջ) տեղեկութիւններ կամ զեկուցումներ տալ Եւրօպային այս մտցրած վերանորոգութիւնների և բարեկարգութիւնների մասին:

Այսքան միայն կարողացել է կոնգրէսը կատարել: Երկի հայերը նոյն իրաւունքը չունէին պահանջել իրանց համար այնպիսի ազատութիւններ և արտօնութիւններ, ինչպէս սլաւօնացիները և յոյները...:

Բացի այս իրաւունքներից որ կոնգրէսը խոստացել է նորոգել հայերին, կայ և ուրիշ մի յոյս հայերի համար, այն է որ Անգլիայի և թիւրքիայի մէջ կապվեցաւ մի մասնաւոր դաշինք: Դրութիւնը որ բոլորովին կոնգրէսի իրաւաւորութեանց դուրս է և որ միայն կապ ունի կիպրոս կղզու մասին արած պայմանների հետ: Զեղ յայտնի եղաւ հեռագրով, որ Անգլիան թիւրքիային պաշտպանելու խոստում տուել է, իսկ դրա փոխարէն իրաւունք ստացել է այս վերջինից կիպրոս կղզին իր ձեռքը զգել: Անգլիան այն պայմանով իրաւունք ունի վայելել այս կղզու սեփականութիւնը, քանի որ Ռուսաստանը պիտի պահի Բաթում, Վարս և Արդահան, իսկ եթէ Ռուսաստանը կամենայ վերադարձնել այս նոր ստացած երկրները, Անգլիան էլ իր կողմից պարտաւորվում է իսկոյն յետ քաջվել կիպրոսից: Այս դաշինքը դրութեան մէջ կամ դրա հետ կապված է նաև հետեւալ որոշումն. ասիական Տաճկաստանի քրիստոնեաների և այլոց վերաբերութեամբ Բ. Գուռը պարտաւորվում է բարեկարգութիւններ (լեֆֆօրմներ) մտցնել, և դժբա պիտի որոշվեն ոչ միայն մենակ թիւրքիայից, այլ միասին Անգլիայի հետ:

Սորանով իսկապէս Անգլիան տիրապետեց ամբողջ փոքր-Ասիային: Շատերը յոյս ունեն որ Անգլիան իր կողմից ամենայն ջանք գործ կը դնէ որ ծաղկեցնի այդ երկրները, բայց միւս կողմից իր վրա աւելնով պարտաւորութիւնը թիւրքիային պաշտպանել ամենայն հանգամանքներում, նա իր վրա բարձեց մի ծանր պարտաւորութիւն...:

Կիպրոսի հարցը այնքան յանկարծակի երևան ելաւ, որ շատերը ոչ միայն դարմացան այլ իրանց դժգոհութիւնն էլ նշմարել տուին: Ասում են օրինակ որ մասնաւոր ֆրանսիական և իտալական շրջանները շատ դժգոհ են այս անցքով, և զուլաւորապէս ֆրանսիական հասարակաց կարծիքը, մասնաւոր, որ այժմ չէ կարելի մինչև անգամ պահանջել, որ այս անգլօ-թիւրք դաշինքը լուսաւորութիւնը կոնգրէսին ներկայացվի: Անգլիան միշտ իրաւունք ունի մերժելու այս պահանջը ասելով, որ բոլոր խնդիրները, որոնք անմիջապէս կախում և կապ չունեն վերջին պատերազմի հետ Ֆրանսիայի առաջարկած Թեմա չը պիտի խօսակցութեան առարկայ դառնային կոնգրէսի մէջ: Ֆրանսիան զգում է, որ նրա օգուտները ձեւավորում են դրանով, որ Անգլիան աւելի հաստատ ղրք է ստանում Միջերկրական

ծովի վրա, բայց նա առժամանակ միջոց չունի իր օգուտները պաշտպանելու:

Բուն Անգլիայի մէջն էլ զգոնները կուսակցութիւն կայ (ազատական), բայց նրա բողոքները պիտի ընդունել իբրեւ կուսակցական ցոյցեր և ոչ թէ իբրեւ մի ներքին համոզմունք: —Նրանք քաղաքականութեան համար նշանակութիւն չունեն և Անգլիայի քաղաքականութեան եղանակը չեն փոխի:

Հայոց պատգամաւորութիւնը այս օրերս թողնելու է Բերլին, Նորբերլին սրբազանները կայարուհու ցանկութեանը համեմատ ներկայացան նրան: Նորին մեծութիւնը շատ սիրով ընդունեց նրանց և սովորութեանը հակառակ, որ պահանջում է ընդունել ոտի վրա կանգնած, կայսրուհին նստացրեց հայոց պատգամաւորներին և բաւական երկար պահեց նրանց սիրով խօսելով նրանց հետ: Թագաժառանգն էլ մարդուղարկեց սրբազանների մօտ, նրանց պատկերները խնդրելով և յոյս յայտնելով նրանց կրկին մի անգամ տեսնելու մինչև նրանց Բերլինից հեռանալը:

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՍԵԻՑ

Երգում, 12 յունիսի

Անցեալ նամակիս մէջ ներկայացրի մի թոյլ նկարագրութիւն լազարեթի ընդունելութեան վրա Երզրումում և խոստովանելով պէտք է ասեմ՝ կարծում էի թէ Երզրումցոց դիւրաբարեք հոգին և երեսակայութիւնը այնպէս պէտք է չլուտով ստաչի, ինչպէս և վաւերի է, բայց ես սխալված երեւցայ: Քանի լազարեթի անկի է մնում թանկագին հիւր Երզրումում, ժողովրդի սիրտը անկի է տաքանում նրա վրա և ուշքը անկի գրաւվում նրանով: Նա շարունակում է մնալ միակ նիւթ Երզրումցոց լեզուի համար և միակ առարկայ նրանց ոգևորութեան: Ժողովուրդը սկսում է հետեւլ ամեն նրա քայլափոխին որ չիցէ թէ յանկարծ գցէ նրան վատութեան մէջ և հեռանայ Երզրումից, փոքրիկ մանուկները անգամ աշխատում են ծանաչել նորան, ցոյց տալով միմեանց հակադասակ դորապետին: Պատմեց ինձ ակնատեսը թէ երբ Լազարեթը դրօսնելու էր դնում, յառաջացաւ յանկարծ դէպի նրան մի հայ մանուկ և հաւտարար մաքար փեշից բռնելով ասեց. «Լազարեթ»: Երեւի զօրապետին այնչափ շարժեց նա, որչափ և զարմացրեց, երբ դերասանը այդ հաւտարարութեամբ յայտնեց իր վստահութիւնը նրան իբրեւ ազանովորի իր կեանքի և ազատութեան:

Մահաւատականները և հայերը աշխատում են կարծես միմեանցից անցնել մեծարանաց և պատաւաւորութեան մէջ: Խեղճ մարդը չունէ մի հանգիստ ժամ հրաւերքներից և չը նայելով կանոնաւոր կեանքը խանգարելու միտաւոր հետեւանքին, նա այնչափ ուշադիր է, որ ի միջոց իր անձին, հաւասարակերպ յարգում է բոլորի ցանկութիւնը: Գտնէ մի այսպիսի վեհ պարզութեան մէջ է մասամբ պատճառը ժողովրդի այսչափ տաք համակրութեան դէպի նա: Ուրիշները լուր մարերս հրաւերք տուաւ նրան Երզրումի անուանի հայ ընտանիք Բաստարանչեան: Հրաւերքի մէջ մասնակից էին բոլոր զօրապետները և բարձրաստիճան զօրականները: Ով ցանկանում է մի գաղափար կազմել այստեղի հարուստ հայի տան ներսի ձեւ վրա, թող երեսակայն սրահը բաղկացած մի չքեղ ծաղկոցից, որը փայլուն պահելու համար ջանքով կը հոգան ինչպէս կանայք, այնպէս և մարդիկ: Սրահի մի անկիւնում ամառային սենեակի կենտրոնում մարմարեայ շատրվանից թափվում է միշտ մարգարտափայլ ջուր, դէպի սրահը նայում են տան բարձրագիւր և ընդարձակ սենեակների լուսավառները, ներսը սարքված է ինչպէս եւրոպական կարասիքով, այնպէս և ասիական զարդով: Պատերը զրկված են կենդանադիրներից: Առհասարակ հիւրերը մեծ բաւականութեամբ ակնատես էին հանդիսանում հայի ձախակին և կենցաղավարութեան: Բայց պարտեզի փառաւոր լուսաւորութիւնը, շատրվանի ծաղկապսակ զարդը, երիտասարդ հայ երգչիկների ներդաշնակ ձայնը, եւրօպական և արեւելեան երաժշտութեան եղանակները, բոլորը, այս բոլորը մոռացվեցան և մթնեցան, երբ երեւցան մի դաս հիւսիսային հայուհիների գողտրիկ և չքեղ տեղական հագուստով: Այն ժամանակ, երբ ընդունելով մեծատուն հայի հրաւերքը, բոլորը պիտի նախապաշարված լինէին կոնանց դուրսութեան վրա և չենթադրէին այդպէս վստահութիւն նոցա գերութեան

հայրենիքում, այդ ժամանակ հանգէս են գալի միանգամայն բնական ձևերով և ազատ շարժվածքով կանայք և օրիորդներ, որոնք ներկայացում էին տանտիրոջ ընտանիքը, քոյրերը և ազգականները: Ամեն կողմից հետաքրքրութեամբ սկսում են նրանց հետ խօսակցել և շուտով ամենքը մնում են հիացած, գտնելով բարձր պատերի մէջ սրամիտ, խելացի և բաւական զարգացած կանայք: Այսպէս մի անակնկալ երեւոյթ դառնում է բոլորի համար անբացատրելի: Ինչպէս է գաղտնիքը այս երեւոյթի, ով է եղել նրանց վրա ազդողը: Ուրիշ ոչինչ բացի այն աւանդական պարզութիւնը, սերտ ընտանեկան կապը, ազատ ու անխախտ առանձին գործունէութիւնը, փոխադարձ հաւատը և յարգանքը, որ տիրապետում են հայի տան մէջ: Արտաքին վաճառ ու սովորութիւնների մէջ, այս, հայը ճշգրիտ նմանվում է բունաւոր մահմետականին, բայց տան մէջ կրնա մնում է յարգանքի առարկայ, սրտի սփոփանք և առաքինութեան ազդիւր: Վերադառնալով տուն դրսի հոգսերից ու վշտերից, հայը գտնում է այնտեղ բարոյական հանգստութիւն և դատողութեան շրջան: Նա խոստովանում է իր քնքշել էակին խղճմտանքի դէմ բռնած դործերը, սիրով լսում նրանից հանդիմանութիւն, հաղորդում է նրան տեսածը ու լըսածը, խորհրդակցում նրա հետ իր անխելքի, նոր ձեռնարկութիւնների ու դժուարութիւնների վրա և հանգիստ հոգով ու անսասան հաստատմամբ թանգը գնում է առանձին իր գործին: Այսպէս կրնա թէպէտ մնում է դուրի հասարակական կեանքից, բայց նա միշտ տեղեակ է այդ կեանքի դրութեան և նրա միտքը զբաղված է ու կըրթվում է ամենօրեայ տուած նիւթով, թէպէտ այդ նիւթը լինի խիստ գործնական և սահմանափակ: Այն այն գաղտնիքը, որով բացատրվում է տաճկահայի ընտանիքների չափաւոր, բայց անսպասելի զարգացումը, վայելուչ և արժանաւոր երեւոյթի և անհամեմատելի տարբերութիւնը մահմետական ընտանիքից: Այն այս տեսակ ազդեցութեան տակ է ապրում և մեծանում հայ ազգիկը, որը զարմացնում է մեզ այժմ իր բանականութեամբ և խելամուտութեամբ: Նորերս մի քանի երիտասարդներ, ամուսնանալով հայ ազգիկներից հետ, հանգէս դուրս բերին իրանց մատաղահաս զոյգերին: Ոչ ոք նրանցից յետ չը մնաց միւսից իր կատարելութիւնը, տակտը ու վարվողութիւնը ամենալաւ կողմից ցոյց տալու մէջ: Պատճառն է միշտ նոյն դրութիւնը և պայմանները:

Մինչդեռ այդ չենք տեսնում մահմետական աշխարհում: Ինչպէս նրանց երեսը փակ է ուրիշի աչքից, այնպէս էլ միտքը կոյր դրսի աշխարհից, նա միայն հարեմի զարդ է և ոչինչ ուրիշ: Այս տարբերութիւնից էին առաջ գալիս, ահա և վստահ խօսակցութիւն, ու ազատ շարժումը, և բնական ձևեր և խելացի ու սուր խօսքը, որ այդչափ զարմացրին առաւ հիւրերին: Բազդի բերմունքը արժանանցնելով մատաղահաս հայուհիներին այն երջանիկ օրին, երբ նրանց աչքի առաջ կանգնած էր իրանց հայրենակից այն մեծ մարդը, որը եօթը փաշայ մի օրում գերեց, Վարսի պատերից մի գիշեր ներս քայլեց, չը դիտէին թէ ինչ կերպ յայտնեն իրանց յարգանքը, գորովանքը և ջերմ զգացումները դէպի նա: Քաջայաղթի կուշտը կտրած, քնքշել էակները պատում էին նրա գլխին, ինչպէս լուսաթիթեւը ճրագի լուսի շուրջը և ամեն շարժումը և հայեացքը արտայայտում էր զմայլմունք, հրճուանք: Սրտաշարժ է իրաւի մի տեսարան, որի մէջ ազգային և հասարակական վիճակի գերութեան գոհերը տեսնում են իրանց աչքի առաջ գերողների սպառնալիքին, նրանց չար հրեշտակին: Հայուհիների սրտալի հիւրերը կալուրթիւնը, սրտազին վարմունքը, պարզ ու համեստ ձևերը այնչափ գրաւեցին հիւրերին, որ նրանք չուտով սկսեցին իրանց վարել ու զգալ ինչպէս հարազատների ու սրտի մօտ ազգականների շրջանում, այնպէս որ երբ տիկնայք և օրիորդներ ի նշան մի առանձին մտերմութեան ու պատուի դէպի ներկայ եղողները, սկսեցին ձեռք ձեռք տուած պարել ազգային պար, ուսուցողապետները չը կարողացան իրանց զսպել մասնակցելու նրանց մէջ, ձևացնելով այսպէս մի սերտ խումբ, կապված փոխադարձ համակրութեամբ ու յարգանքով: Այս բոլորի բարոյական կապը ու պսակը ներկայացնում էր անշուշտ հրամանատարի անձնադրութիւնը, որին այնչափ սիրում էին հիւրերը—իւր ստորադրեալները, որչափ և հանդիսակատարները: Մի այսպիսի յափշտակող տպաւորութեան ազդեցութեան տակ թէ ուրիշ հանգամանքի սեղանի վրա ռուս զօրականները մրցում էին միմեանց հետ ճար-

տարախօս առեւտրաճանապարհի պատիւ և ի համակրութիւն հայոց ազգի, որին յայտնելով իրանց խորին յարգանքը և գովասանքը, մաղթում էին նրան բոլոր սրտից երջանիկ վիճակ մօտաւոր ապագայում: Որովհետեւ խօսողները շատ էին և մէկը միւսից զրաւած, ես մէջ կը բերեմ միւս խօսածը, որին ոգեւորութեամբ և երկար ծափահարեցին բոլորը և օրի մէջ նա յայտնեց այնչափ տար հոգի, որչափ և լուրջ միտք:

P. S. Նամակս ուշացաւ ուղարկվելու ինձնից անկախ պատճառով:

Գր. Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ГОЛОСЪ» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից յունիսի 30-ին (յուլիսի 12-ին) հետեւեալը. «Նրէկ երեկոյեան, հայերի մէջ մեծ խռովութիւն ծագեց «Մանգուլէ Էֆէր» լրագրի մէջ տպված յօդուածի պատճառով, որի մէջ ասվում է, որ օտոմանեան լրագրները տեղեկութիւն տուին, որ կոնգրէսը ու չի զարձնի ինքնավարութեան նախագծի վրա, որը հայ պատգամաւորները ներկայացրին Բերլին: Հաղար հայեր, հաւաքվելով եկեղեցիների մէջ, բողոքեցին այս յայտարարութեան դէմ: Պատրիարքարանում յուզմունքներ ահագին էր: Պատրիարքի փոխանորդը երեկոյեան ուղևորվեցաւ Բուխարէսէ, նոր թախանձանքներով հայոց խնդիրը յանձնելու ռուսաց ղեւպանի հովանաւորութեանը: Հայոց պատրիարքը այսօր Տէրապիա ուղևորվեցաւ, որ մօտիկ գտնվի ռուսաց և Ֆրանսիական ղեւպաններին, որոնք այստեղ համարվում են Հայաստանի բնական նեցուկներ: Վախենում են, որ եթէ կոնգրէսը պատրիարքի յիշատակագիրը կը մերժէ, սարսափելի չարժում կը ծագի Կ. Պոլսում, ուր հաշվում են մօտ 150,000 հայեր»:

—Բերլինից հեռագրում են լրագրիներին, որ խաղաղական դաշնագիրը ստորագրելուց յետոյ կուն Անգրաչի կոնգրէսի բոլոր անդամների կողմից շնորհակալութիւն յայտնեց իշխան Բիսմարկին նրա աշխատանքների համար: Կոնգրէսը վերջացաւ իշխան Բիսմարկի ճառով:

—Լրագրիներին հեռագրում են, որ Բօսնիայի վալին հրաման ստացաւ Բ. Կրնից գործածել իր բոլոր ազդեցութիւնը Բօսնիայի մահմետական ազգաբնակչութեան վրա, որ նա չընդդիմադրէ անտորիական զորքերին Բօսնիան դառնալու ժամանակ:

—Լրագրիները հաղորդում են, որ յոյն վաճառականները սաստիկ զրգոված են Անգլիայի դէմ:

—Կ. Պոլսից հեռագրում են լրագրիներին, որ նորբերլին կայացած ազգային մեծ խորհուրդին ներկայ են գտնվել երեք նախկին Շէյխուլ-Խայամին: Նրանցից իւրաքանչիւրին բացի սովորական ռոճիկը նշանակած է 15000 պիստոլ մասնական ռոճիկ այն պայմանով, որ նոցա հաճութիւն տան և ընդունեն Բերլինի կոնգրէսի վիճիւնքը: Ինչ կը վերաբերի երկրորդի դիմումին, ներկայ Շէյխուլ-Խայամ Մահմադ-Մուխտարէֆէնդին հրատարակեց մի ֆետվա հետեւեալ բովանդակութեամբ. «Եթէ իսլամի մէկ կամ մի քանի երկիրները ընկնում են թշնամու ձեռքը, կամ եթէ անկարելի է նրանց պաշտպանել, անհրաժեշտ է նրանց զոհել միւս նահանգները ազատելու համար: Շարիաթը արդէս թոյլ է տալիս այդպիսի դիմումն անել անհաւատներին: Այս, այդպէս և կարծում Ալլահի շնչին ծառայ Անիշ-Մուխտարէֆէնդին»:

—«Polit. Correspond.» լրագիրը հաղորդում է որ Բուլնիան շարունակում է ղեկավարել իր զօրքերը: Բուլնիական տէրութիւնը մեծ պատրաստութիւններ է տեսնում և զէնքի պատուէրներ է անում Գերմանիայում և Անգլիայում:

—Բերլինից հեռագրում են «Новое Время» լրագրին, որ թէ և Ֆրանսիան համաձայնեցաւ ստորագրել Բերլինի դաշնագրութիւնը, բայց իրան իրաւունք է պահում չը համաձայնվել Անգլիայի հետ անգլո-թիւրք դաշնագրի և Կիպրոսի միագլխային միացնելու մասին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՍԵԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 8 յուլիսի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ

97 ռ. 50 Կ., երկրորդ 96<sup>3</sup>/<sub>4</sub> ռ., երրորդ 96 ռ., չորրորդ 96 ռ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 238 ռ., երկրորդ 237 ռ. 25 Կ., արեւելեան 95 ռ. 75 Կ., ոսկին 7 ռ. 81 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 35, 50 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 217 մարկ, Փարիզի վրա 267 ֆր. 50 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

ԼՕՆԴՈՆ, 7/19 յուլիսի: Լօրդերի երէկվայ նիստի ժամանակ Բիկոնսֆիլդ ներկայացրեց պարլամենտին Բերլինի կոնգրէսի պատմօրը և պաշտպանում էր կառավարութեան քաղաքականութիւնը կոնգրէսում: Նա ասաց, որ լրդ եւրօպական պետութիւնները, նոցա լրդ և Ռուսաստանը, այն համոզմունքի հասան, որ Թիւրքիայում հանգստութիւն և կարգ պահպանելու համար ամենալաւ գրաւականները ներկայացնում է միայն սովորական իշխանութեան պահպանելը: Յունաց շահերը չէին մոռացված, բայց Յունաստանը պէտք է սովորի համբերել: Անգլիան կանգնեցրեց Ռուսաստանի առաջնալը, բայց Ասիայում բաւական տեղ կայ թէ Անգլիայի և թէ Ռուսաստանի համար: Գրեւիլը և Գերբի յանդիմանում են կառավարութեան քաղաքականութիւնը:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 9 յուլիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Ձինանաների միկիտար Բէյտերն արձակված է: Նրա տեղ նշանակած է գեներալ-կոնտրօլօր Գրէյթ, Գրէյթի տեղ պետական քարտուղար Սօլսկի, Սօլսկու տեղ գաղտնի խորհրդատու Պերեցո:

ԼՕՆԴՈՆ, 8/20 յուլիսի: Համայնքների ժողովում արեւելեան հարցի վերաբերութեամբ իր առաջարկած ձեւակերպութեան մէջ Հարտինգտոն բաւականութիւն պէտք է յայտնէ այն առիթով, որ արեւելքում եղած խառնակութիւնները Բերլինի կոնգրէսը կարգադրել է, առանց գործը նոր պատերազմի հասցնելու և որ Թիւրքիայի մի քանի ազգութիւններին ազատութիւն և ինքնավարութիւն է տուած: Բայց մի և նոյն ժամանակ ընդդիմադրող կուսակցութեան հարցի մէջ ցաւակցութիւն կը լինի յայտնած, որ Յունաստանի պահանջներին մեծ ընթացք չէ տուած, որ Անգլիան, ապահովելով Թիւրքիայի իշխանութեան տակ մնացած երկիրները, զրանով բարձեց իր վրա պարտականութիւն և պատասխանատուութիւն առանց ցոյց տալու զրանց բաւականացնելու միջոցները և առանց պարլամենտի համալրութիւնը նախապէս ստանալու: Վիճաբանութիւնները այս հարցի առիթով երեւի կը սկսվեն յուլիսի 29-ի նստում:

